

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ



ՈՐԱԿԻՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԶԱՓՈՎ

ԵՐԵՎԱՆ - 2019

**ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

*Որակի ապահովման քաղաքականության հիմքերը դրվել են Ակադեմիայի 2014-2019 թթ. զարգացման ռազմավարական ծրագրով, որտեղ ներկայացվում են կրթության որակի բարձրացմանը նպատակաուղղված բոլոր հիմնախնդիրները:*

*Ակադեմիան մասնակցում է կրթական ծրագրերի որակի ներքին և արտաքին գնահատման, պետական հավատարմագրման գործընթացներին, ապահովում դրանց թափանցիկությունը և արդյունքների հրապարակայնությունը:*

**ՉԱՓԱՆԻՇ:** ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

**ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:**

<b>Հիմքեր՝</b>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Ակադեմիայի 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը</li> <li>➢ Ակադեմիայի 2020-2024թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը</li> <li>➢ Որակի ապահովման հայեցակարգը</li> <li>➢ Որակի ապահովման քաղաքականությունը</li> <li>➢ Որակի ապահովման ձեռնարկը</li> </ul>
----------------	--

**Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):**

Ակադեմիայի գործող ՌԾ-ում սահմանվել են այն հիմնական ուղղությունները, որոնց հետևում է իր առաքելությունը և հիմնական ռազմավարական նպատակներն իրականացնելու համար, տրամադրելով որակյալ ծառայություններ (**Հավելված No.1.2**): ՌԾ-ում առկա է ուսուցման որակի բարձրացմանը նպատակաուղղված հիմնախնդիրները: Ակադեմիան ընթանում է եվրոպական բարձրագույն կրթական տարածքում ինտեգրման ուղիով, և նրա համար ուղենիշ են կրթության որակի եվրոպական ընկերակցության (ENQA) չափանիշները: Այդ նպատակով, Ակադեմիայում ուսանողների կրթական որակի ապահովման և գնահատման համար ստեղծվել են ՈԱԿ և համապատասխան հանձնաժողովներ: Կրթության որակի ապահովումն Ակադեմիայի ծրագրային առաջնահերթություններից է, որը կրթության ու գիտության համընթաց զարգացման, անհրաժեշտ գիտելիքների ստեղծման, փոխանցման և տարածման հիմքն է:

Ակադեմիայի 2020-2024թթ. ՌԾ նախագծով նպատակ է դրվել՝ բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը (ՆՊԱՏԱԿ 2).

1. նախաձեռնել և իրականացնել ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթաց.
2. գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը.
3. գործադրել ակադեմիայի ՊԴԿ-ի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում.
4. որակի ապահովման ուսանողական հանձնաժողովների հիման վրա ստեղծել կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար.
5. նախապատրաստել և առցանց եղանակով իրականացնել ակադեմիայում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները:

Ակադեմիայում 2014թ. մշակվել է որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը, որակի ապահովման հայեցակարգն ու քաղաքականությունը և հաստատվել ԳԽ-ի (No2, 05.05.2014) կողմից **(Հավելված No10.1, Հավելված No10.2 և Հավելված No10.3):**

Ակադեմիան կրթության որակի բնագավառում սահմանել է քաղաքականություն և առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ «Կրթության մասին» օրենքով, Ակադեմիայի կանոնադրությունով, Ակադեմիայի որակի ապահովման հայեցակարգի, ինչպես նաև Բոլոնիայի հռչակագրին անդամակցված երկրներին ուղղված Բեռլինի և Բերգենի կոմյունիկեներով, որտեղ կոչ է արվում ստեղծել ներդաշնակություն եվրոպական երկրների բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգերում: Այն համահունչ է ՀՀ կրթական քաղաքականության գլխավոր խնդրին՝ ապահովել կրթության բարձր որակ՝ հիմքում պահպանելով նրա հիմնարարությունն ու համապատասխանությունն անհատի, հասարակության և պետության այժմեական և հեռանկարային պահանջներին: Կրթության որակի բնագավառում Ակադեմիայի գործունեության նպատակն է ապահովել բարձր մրցունակություն կրթական ծառայությունների շուկայում, զարգացնել Ակադեմիայի ներուժը կրթական և գիտական գործունեության ավանդական բնագավառներում:

Ռազմավարական նպատակներին հասնելու համար Ակադեմիան իրականացնում է ռեսուրսների արդյունավետ օգտագործում, ձևավորել է որակի կառավարման մշակույթ, ստեղծել հիմքեր կրթության որակի շարունակական բարձրացման ուղղությամբ **(Հավելված No1.2):** Ակադեմիայի ղեկավարությունը գիտակցում է որակի ապահովման համակարգի կարևորությունը և մշտապես աշխատանք է տանում դրա կատարելագործման և զարգացման ուղղությամբ: Ակադեմիան առաջնորդվում է որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով (ESG) և ISO 9000-2000 չափորոշիչներով (ԵՉՈՒ): Այն ապահովում է Ակադեմիայի մրցունակությունը և կայունությունը կրթական ծառայությունների շուկայում, գիտական և նորարարական գործունեությունը, ֆինանսական ցուցանիշների աճը, հետևաբար նաև աշխատակիցների և շահակից կողմերի բավարարվածությունն ու վստահությունը ապագայի նկատմամբ:

Ակադեմիայի ղեկավարությունն ապահովում է սույն քաղաքականության արդյունավետ իրականացումը: Ե՛վ ղեկավարությունը, և՛ աշխատակիցները գիտակցում են, որ իրենց աշխատանքի որակից է կախված արտաքին ու ներքին շահակիցների բավարարվածությունը: Ակադեմիայում ԵՉՈՒ պահանջներին համահունչ որակի ներքին համակարգը սկսվել է ներդրվել 2014թ., սակայն ՈԱ առանձին մեխանիզմներ և ընթացակարգեր մինչ այդ էլ գործել են, օրինակ՝ գործունեության պլանավորումը և համապատասխան հաշվետվողականությունը, դասալսումները (Ակադեմիայի հիմնադրման օրվանից) և այլն: Ակադեմիայում Մինչ այդ, բացակայում էր ԵՉՈՒ-ի պահանջներին համապատասխան ՈԱ մի շարք կարևոր մեխանիզմներ և ընթացակարգեր, իսկ եղածներն էլ ինտեգրված չէր ՈԱ մեկ ընդհանուր համակարգում: Այդ նպատակով՝ Ակադեմիան հետևողական աշխատանք է տանում ԵՉՈՒ պահանջներին համահունչ ՈԱ համակարգ ստեղծելու համար:

Այժմ Ակադեմիայում գործում են ՈԱ մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են մասնագիտության կրթական ծրագրերի, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ ու վարչական կազմի, ուսանողների գնահատման համակարգի և ուսումնառության ռեսուրսների որակի շարունակական բարելավմանը և այլն: Դրանք են.

1. կրթական ծրագրերի արտոնումը,
2. Ակադեմիայի բոլոր գործընթացների և ստորաբաժանումների աշխատանքների տարեկան պլանավորումը և ամենամյա հաշվետվությունները,
3. կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկումը և պարբերական վերանայումը,
4. դասալսումները,

5. ՊԴԿ-ի որակավորման բարձրացման ծրագրերը,
6. արտաքին շահակիցների հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպում-քննարկումները,
7. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում արտաքին շահակիցների մասնակցությունը ու նրանց շրջանում անցկացվող հարցումները,
8. Ակադեմիայից ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի բավարարվածության ուսումնասիրության հարցումները,
9. դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումները,
10. պրակտիկաների կազմակերպման արդյունավետության գնահատման հարցումները:
11. շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումները,
12. ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցումները,
13. կրթական ծրագրերի արտաքին շահակիցների հարցումները:

Կրթական ծրագրերի մշտադիտարկման գործընթացներում օգտագործվում է ուսանողների և շրջանավարտների հարցումների արդյունքները, իսկ պարբերական վերանայման գործընթացներում՝ շրջանավարտների հարցումների և շրջանավարտներից շահակիցների բավարարվածության հարցումների արդյունքները: Ծրագրերի պարբերական վերանայման ընթացակարգերում ներգրավվում են նաև արտաքին փորձագետներ:

Ինքնավերլուծության արդյունքները հնարավորություն են ընձեռում գնահատել Ակադեմիայում արձանագրված առաջընթացն ու հաջողությունները, բացահայտել թերացումներն ու բացթողումները և մշակել դրանք վերացնելու գործընթացները: Միաժամանակ, ինքնավերլուծությունը նպատակաուղղված է Ակադեմիայի ինքնազարգացման և կատարելագործման գործընթացի խթանմանը:

Որակի ապահովման վերոնշյալ բոլոր մեխանիզմներն ու ընթացակարգերը հաստատվում են ԳԻՄ-ի կողմից, հրատարակվում և տրամադրվում բոլոր ուսումնական ու վարչական ստորաբաժանումներին, արտաքին շահակիցներին և լայն հանրությանը հասանելի դարձնելու նպատակով տեղադրվում Ակադեմիայի կայքէջում ([www.cmsa.am](http://www.cmsa.am)):

***ՉԱՓՈՂՈՇԻՉ ք. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:***

<b><i>Հիմքեր՝</i></b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ <i>Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կանոնադրությունը</i></li> <li>➤ <i>Ակադեմիայի 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը</i></li> <li>➤ <i>Ակադեմիայի որակի ապահովման հայեցակարգը</i></li> <li>➤ <i>Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը</i></li> </ul>
-----------------------	--

***Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):***

Ակադեմիայում որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) գործում է 2014թ.: ՈԱԿ-ն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, այլ իրավական ակտերին, Ակադեմիայի կանոնադրությանը (***Հավելված No1.1***) և կենտրոնի կանոնադրությանը համապատասխան, հաստատված ԳԻՄ-ի (No2, 05.05.2014) կողմից (***Հավելված N 10.3***):

ՈԱԿ-ն ինքնակառավարվող մարմին է և իր որոշումներն ընդունում է ԳԻՄ-ի հաստատած կանոնադրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում: ՈԱԿ-ը կազմում է քննարկվող հարցերի շրջանակը՝ հիմք ընդունելով Ակադեմիայի որակի ապահովման հաստատված քաղաքականության հիմնադրույթները: Որակի ապահովմանն առնչվող բոլոր փաստաթղթերը հաստատվում են ԳԻՄ-ի կողմից, տեղակայվում Ակադեմիայի կայքում և հրատարակվում բրոշյուրների տեսքով: Ակադեմիան որակի ապահովման գործառույթներում կարևորում է ներքին և արտաքին

շահակիցների մասնակցությունը: Շահակիցների մասնակցությունը ներառում է հետևյալ ոլորտները՝

- կառավարման և վարչական գործընթացներ.
- ուսումնական գործընթացներ.
- հետազոտական գործընթացներ:

Պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ ՊԴԿ-ի, ուսանողների, արտաքին շահակիցների և այլ ներկայացուցիչների հետ:

Ի կատարումն Ակադեմիայի ԳԽ-ի 2018թ. դեկտեմբերի 14-ի No5 նիստի որոշման և 09.01.2019թ. ռեկտորի թիվ ՈԱ-1 հրամանի, ձևավորվեց ԳԽ-ին կից որակի ապահովման մշտական հանձնաժողով, որն իր իրավասության շրջանակներում քննարկում է ՈԱԿ-ի կողմից ներկայացված կանոնակարգային, ընթացակարգային փաստաթղթերը և համապատասխան եզրակացության հետ ներկայացնում ԳԽ-ի հաստատմանը:

ՈԱԿ-ի աշխատակիցներն Ակադեմիայի որակի ներքին ապահովման գործընթացներն արդյունավետ իրականացնելու նպատակով պարբերաբար մասնակցում են ՈԱԿ-ի կազմակերպված վերապատրաստումներին:

***ՉԱՓՈՂՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:***

<b><i>Հիմքեր՝</i></b>	<ul style="list-style-type: none"><li>➤ Ակադեմիայի որակի ապահովման հայեցակարգը</li><li>➤ Ակադեմիայի որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը</li><li>➤ Որակի ապահովման քաղաքականությունը</li></ul>
-----------------------	---

***Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):***

Որակի ապահովման հիշյալ գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին (պրոֆեսորադասախոսական և վարչական կազմ, ուսանողներ), այնպես էլ արտաքին շահակիցներ (ԱԻՆ ներկայացուցիչներ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Ակադեմիայի շրջանավարտներ և այլն):

Ակադեմիայի ԳԽ-ում, ֆակուլտետի խորհրդում, ԳԽ-ին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովում, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, ինչպես նաև Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման գործընթացներն իրականացնող աշխատանքային խմբում ներգրավված են ներքին և արտաքին շահակիցներ:

Ակադեմիան հատկացնում է համապատասխան մարդկային, նյութական ու ֆինանսական ռեսուրսներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում տարաբնույթ հարցումների նախապատրաստման, անցկացման, արդյունքների մշակման ու ամփոփման աշխատանքների համար: Օրինակ, ուսանողի կողմից կանոնավոր կերպով, ըստ հաստատված պարբերականության, իրականացվում է ՊԴԿ-ի մասնագիտական և մանկավարժական կարողությունների գնահատման հարցում, կամ՝ ուսանողների հարցման արդյունքներով վեր են հանվում բազմաբնույթ հիմնախնդիրներ ՊԴԿ-ի որակի, ուսումնական գործընթացի կազմակերպման, առանձին մոդուլներից բավարարվածության և այլնի վերաբերյալ:

Համաձայն գործող գործառնությունների արտաքին շահակիցները լուրջ դերակատարում ունեն շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և ավարտական աշխատանքների պաշտպանության հանձնաժողովներում: Հանձնաժողովի նախագահին և անդամներին նշանակում է ԱԻ նախարարը, ոլորտի մասնագետներից կամ գիտնականներից՝ ոչ ավելի հանձնաժողովի անդամների 20%-ից:

Ավարտից հետո հանձնաժողովի նախագահը ներկայացնում է՝ «Քննական հանձնաժողովի նախագահի կարծիքը, որը քննարկվում է ամբիոնի խորհրդում և ԳԽ-ում, ինչը հաշվի է առնվում կրթական ծրագրերի վերանայման ժամանակ: Բացի այդ, արտաքին շահակիցների (փորձագետներ, շրջանավարտներ, գործատուներ) դերը և կարծիքը որոշիչ է կրթական ծրագրերի արտաքին գրախոսման ընթացքում, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում, կրթական ծրագրերից և շրջանավարտների մասնագիտական որակից գործատուների բավարարվածության հարցումներում:

Պարբերաբար տեղի են ունենում հանդիպումներ հիմնական շահակիցների հետ:

Ակադեմիայի գործող մասնագիտությունների, նոր մասնագիտությունների բացման, կրթական ծրագրերի մշտադիտարկման, ՊԴԿ-ի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, դասախոսների ընտրության, աշխատանքի ընդունման, ազատման, ՊԴԿ-ի առաջաջման, ուսանողների աշխատակիցների Ակադեմիայից բավարարվածության գործընթացներում մեծապես օգտագործվում են արտաքին և ներքին շահակիցների շրջանում անց կացվող հարցումների արդյունքները:

Այսպիսով, պարզ է դառնում, որ ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են Ակադեմիայի բոլոր գործընթացներում:

***ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:***

<b><i>Հիմքեր՝</i></b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ <i>Ակադեմիայի 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը</i></li> <li>➤ <i>Ակադեմիայի որակի ապահովման ձեռնարկը</i></li> </ul>
-----------------------	---

***Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):***

ՈԱԿ-ը մշտապես գտնվում է Ակադեմիայի ղեկավարության ուշադրության կենտրոնում, հաշվի առնելով այդ կառույցի կարևորությունն Ակադեմիայի գործունեության բոլոր ոլորտներում: ՈԱԿ-ի գործունեության շրջանակը բխում է Ակադեմիայի ՌԾ-ի իրականացման կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերից, ԳԽ-ի, ռեկտորատի որոշումներից: Ակադեմիան կարևորում է որակի ապահովման համակարգի պարբերաբար վերանայումը և որակի բարելավման միջոցառումները մշակելիս հաշվի է առնվում այն նորամուծական գործընթացները, որոնք ընթանում են բարձրագույն կրթության եվրոպական տարածքում: Պարբերաբար վերանայվում են Ակադեմիայի ՌԾ-ում առաջադրված նպատակներն ու խնդիրները:

Ըստ սահմանված չափանիշների և հետազոտման արդյունքների Ակադեմիայում որակի ապահովումն իրականացվում է անընդհատ, հետևողական վերահսկման ռեժիմով: Որակի ներքին ապահովման համակարգի վերանայմանն են ուղղված նաև տարբեր միջազգային նախագծերի շրջանակներում իրականացվող ծրագրերը:

***Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):***

- Դրանք են՝
- ՌԴ Կազանի Ա.Ն. Տուպոլևի անվան ազգային հետազոտական տեխնիկական համալսարան,
  - ՌԴ ԱԻՆ քաղաքացիական պաշտպանության ակադեմիա,
  - Վարշավայի հրդեհային ծառայության բարձրագույն ուսումնական հաստատություն,
  - Երևանի պետական համալսարան,
  - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան,
  - Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա,

- Երևանի պետական տնտեսագիտական համալսարան:  
Ակադեմիայում որակի ներքին ապահովման համակարգի ձևավորմանը զուգընթաց տարվում են բենչմարքինգի հնարավորությունների ընդլայնման աշխատանքներ:

**ԶԱՓՈՂՈՇԻՉ Է. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:**

<b>Հիմքեր՝</b>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Ակադեմիայի 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը</li> <li>➤ «Որակի ապահովման ներքին համակարգ (Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման շրջանակը և գործունեության հիմնական սկզբունքները)» մեթոդական ցուցումները</li> <li>➤ Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվություններն ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների</li> </ul>
----------------	---

**Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):**

Ակադեմիան, հիմք ընդունելով կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողության միասնական քաղաքականությունը, իր առկա 2014-2019թթ. ՌԾ-ում հաշվի է առել Որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից սահմանված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների/չափորոշիչների պահանջները, ինչն արտացոլված է ՌԾ-ի ուղղություններում, նպատակներում և խնդիրներում: Վերջինները ներկայացված են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում:

Ակադեմիայի 2014-2019թթ. ՌԾ-ի 2-րդ Նպատակի 2.5-րդ խնդրում ամրագրված է՝ նախապատրաստել Ակադեմիան կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին՝ բարձրագույն կրթության որակի արտաքին արժևորման պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխան **(Հավելված No1.2):**

Ակադեմիան ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունն իրականացնելու նպատակով հիմք է ընդունում ԳԽ կողմից հաստատված փաստաթղթային փաթեթը և որակի ներքին ապահովման գնահատման մեխանիզմներից ստացված տվյալների վերլուծությունը: Ինքնավերլուծության գործընթացը պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով մշակվել և տպագրվել է «Որակի ապահովման ներքին համակարգ (Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման շրջանակը և գործունեության հիմնական սկզբունքները)» մեթոդական ցուցումները **(Հավելված No10.4):** Հիշյալը նախատեսված է Ակադեմիայի ուսումնական ստորաբաժանումների, դեկանատների, աշխատակիցների, ՊԴԿ-ի և ուսանողների համար: Մեթոդական ցուցումներում ներկայացված են Ակադեմիայի ինքնավերլուծության նպատակներն ու խնդիրները, ինքնավերլուծության գործընթացի կազմակերպման սկզբունքները, ընթացակարգերը, ինքնավերլուծությունն իրականացնելու համար օգտակար գործիքներն ու հիմնական փուլերը, ինքնավերլուծության զեկույցի պատրաստման վերաբերյալ մոտեցումները և այլն:

Աշխատանքային խմբերի կողմից ինքնավերլուծության ձևաչափի պահանջներին համապատասխան, կատարվում է անհրաժեշտ փաստաթղթերի ու տվյալների հավաքագրում, մշակում, տվյալների ներմուծում (որակի գնահատման բոլոր գործընթացների լիարժեք իրականացման համար), միասնական տվյալների բազայի ձևավորում, առկա գործիքամիջոցների միջոցով որակի վերաբերյալ տեղեկատվության վերլուծություն, ըստ նշանակության դասակարգում (որակի բարելավման ռեսուրսների հայտնաբերման համար) և համակարգում **(Հավելված No10.1):** Որի հիման վրա, համապատասխան գործիքամիջոցների ու կառուցակարգերի միջոցով, կատարվում է Ակադեմիայի գործունեության բոլոր ոլորտների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում:

Որպես կրթության որակի համակարգի կարևորագույն բաղադրատարրեր դիտարկվում են կրթական ծրագրերը, դասընթացները, դասավանդման և ուսումնառության որակը, կրթական միջավայրի որակը, ուսանողների գնահատման գործընթացը և այլն:

ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 30-ի No959-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները ու չափորոշիչները, որոնք Ակադեմիայի համար ուղեցույց են հավատարմագրման և որակի ներքին ապահովման գործընթացներում:

***ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:***

<b>Հիմքեր՝</b>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Ակադեմիայի 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը</li> <li>➢ Ակադեմիայի 2020-2024թթ. զարգացման ռազմավարական ծրագրի նախագիծը</li> <li>➢ Ակադեմիայի 2014-2019թթ. գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)</li> </ul>
----------------	---

***Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը (կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից):***

Ակադեմիայի գործունեության հրապարակայնությունը և որակի ապահովման գործընթացների թափանցիկությունն ապահովվում է դրա մասին պարբերական տեղեկատվության ներկայացմամբ, օգտագործելով հնարավոր բոլոր ներքին և արտաքին միջոցները, հանդիպումներն ուսանողների ու ՊԴԿ-ի հետ և հրապարակային քննարկումներն ու մտքերի փոխանակումները՝ կիրառելով ԱԻՆ և Ակադեմիայի կայքերը, Ս911 էլեկտրոնային թերթը, ՁԼՄ-ները և այլն:

Ակադեմիայում առկա է գործունեության թափանցիկությունն ապահովող առանձին մեխանիզմներ: Օրինակ, Ակադեմիայում գործում է Ս911 էլեկտրոնային թերթի խմբագրությունը, որն ակտիվ համագործակցում է ՁԼՄ-ների հետ, լուսաբանում Ակադեմիայի գործունեությունը, ներքին և արտաքին շահակիցներին տրամադրում տեղեկատվություն գործընթացների որակի մասին: Օպերատիվ լրատվության և սեփական գովազդային նյութերի հրատարակումով էլ նպաստում է Ակադեմիայի դրական իմիջի պահպանմանը:

Ակադեմիայի գործունեության թափանցիկության ապահովման մեխանիզմներից է ցանկացած նոր նախաձեռնության նախագծի տեղադրումն Ակադեմիայի կայքում և շահակիցների առաջարկությունների ու դիտողությունների հավաքագրումը, քննարկումների հնարավորությունը, օրինակ, 2020-2024թթ. ՌԾ-ի նախագիծը (***Հավելված No1.3***):

Ակադեմիայի կայքն ու Ս911 էլեկտրոնային թերթը-ն ունեն «Հետադարձ կապ» և «Հարց ու պատասխան» բաժինները, որոնցով բոլոր շահակիցները կարող են ստանալ իրենց հարցերի պատասխանները:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների վերաբերյալ հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը պարբերաբար հրապարակվում է տարբեր միջոցներով՝ օրինակ,

- Ակադեմիայի յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության գովազդային բուկլետը պարունակում է տեղեկատվություն տվյալ տարվա ընդունելության պլանով նախատեսված մասնագիտությունների մասին, ուսուցման ձևերի, ուսման վճարի և այլնի վերաբերյալ,
- դիմորդի տեղեկատվություն ներառում է ամփոփ տեղեկատվություն առաջարկվող մասնագիտությունների, ուսուցման ձևերի, մրցութային և ոչ մրցութային ցուցանիշների, ուսման վարձի չափի և այլնի վերաբերյալ,
- կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցները և դասընթացների տեղեկագրքերը բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսանողների համար են, և պարունակում են ուսանողների ուսումնառության համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ մասնավորապես,



կրեդիտային համակարգի հիմնադրությունների, ուսումնական գործընթացի կամակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման կարգի, առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատածավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների, բովանդակության ու կրեդիտների վերաբերյալ:

- ռեկտորի տարեկան հրապարակված հաշվետվությունը, որը ներառում է Ակադեմիայի տարեկան գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն ու ֆինանսական հաշվետվությունը:

Գործունեության թափանցիկության առանձին դրսևորում է Ակադեմիայի ամբիոնի վարիչի և ՊԴԿ-ի պաշտոնների թեկնածությունների բաց մրցույթով առաջադրման, ընտրությունների կազմակերպման, անցկացման և նշանակման կարգը: Թափուր պաշտոնների տեղակալման համար բաց մրցույթի մասին հայտարարությունը ձևակերպվում է ռեկտորի հրամանով, գետեղվում Ակադեմիայի կայքում և ՈԳ11 էլեկտրոնային թերթով-ում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղին հավակնող թեկնածուին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը:

Ակադեմիայի գործունեության թափանցիկության ևս մեկ դրսևորում է տարբեր հանդիպումներն ու քննարկումները ՊԴԿ-ի և ուսանողների հետ: Օրինակ, ՊԴԿ-ի և ուսանողների համար պարբերաբար ավելի խորը և հանգամանորեն մեկնաբանվում են Ակադեմիայում որակի ապահովման ուղղությամբ իրականացվող գործառնությունները:

Ակադեմիան մինչև 2018թ. հրատարակել է ՈԳ11 Արտակարգ թերթով շաբաթաթերթը:

**Չափանիշ 10-ի վերաբերյալ ներկայացնել վերջին 3 տարվա SWOT վերլուծություն:**

**ՀԱՓԱՆԻՇ X. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

**SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

<b>Ուժեղ կողմեր (Strengths)</b>	<b>Թույլ կողմեր (Weaknesses)</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. ՈԱԿ-ի և ԳԽ-ին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովի առկայություն:</li> <li>2. Ռազմավարական ծրագրում որպես առաջնահերթ խնդիր, որակի ապահովման հարցերի հստակ սահմանում և ձևակերպում:</li> <li>3. Ակադեմիայի ղեկավարության կողմից որակի ապահովման ներքին և արտաքին համակարգերի ձևավորման ու ներդրման հարցերում բարձր շահագրգռվածություն:</li> <li>4. Որակի ապահովմանն ուղղված բազմաթիվ մեխանիզմների և ընթացակարգերի առկայություն:</li> <li>5. Որակի գնահատմանն ուղղված ինքնավերլուծությունների իրականացման փորձ:</li> <li>6. ENQA ստանդարտների պահանջներին համահունչ որակի ապահովման հաստատված հիմնադրությունների առկայություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Որակի ապահովման գործընթացների բենչմարքինգի անկատարություն:</li> <li>2. Որակի ապահովման համակարգի խնդիրների վերաբերյալ հանրության լայն շրջանակների անբավարար տեղեկացվածություն:</li> <li>3. Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների մասնակցության պակաս շահագրգռվածություն:</li> <li>4. Որակի ապահովման գործընթացների մոնիթորինգի և գնահատման փորձի պակաս:</li> </ol>
<b>Հնարավորություններ (Opportunities)</b>	<b>Վտանգներ (Threats)</b>
<ol style="list-style-type: none"> <li>1. Ակադեմիայի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի առկայություն:</li> <li>2. Առաջավոր ԲՈԻՀ-երի որակի ապահովման կենտրոնների հետ համագործակցություն:</li> <li>3. Որակի ներքին և արտաքին ապահովման համակարգի վերանայման հնարավորություն:</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Ակադեմիայում որակի ապահովման մշակույթի ոչ լիարժեք ձևավորվածություն:</li> <li>2. Որակի ապահովման կենտրոնն արհեստավարժ մասնագետներով համայրելու դժվարություններ:</li> </ol>

<p>4. Ակադեմիայում որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի ձևավորմանը զուգընթաց բենչմարքինգի հնարավորությունների ընդլայնում:</p>	
<p>Հիմք ընդունելով Ակադեմիայի գործող ռազմավարական ծրագրի գործողությունների շարքը և բարձրագույն կրթության որակի արժևորման Եվրոպական ընկերակցության չափանիշները, մշակվել են ուսուցման որակի գնահատման և ապահովման ակադեմիական համակարգի ձևավորման հայեցակարգային սկզբունքները և կազմակերպական սխեման: Ակադեմիայում ստեղծվել է որակի ապահովման կենտրոն:</p> <p>Գործող ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան հաջողությամբ իրականացվել է Ակադեմիայի անցումն ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին՝ ապահովելով վերջինիս համատեղելիությունը եվրոպական ECTS համակարգին:</p> <p>Ակադեմիայի ռազմավարական նպատակներից է առկա ուսումնամեթոդական բազայի հիման վրա կատարելագործել և ապահովել ներդրված համակարգի լիարժեքությունը, ընդլայնել ընձեռած հնարավորությունների շրջանակը և բարձրացնել դրա կիրառման արդյունավետությունը:</p>	